Ծրագրի ֆինանսական հաշվետվություններև Անկախ աուդիտորի եզրակացություն

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ

էլեկտրամատակարարման հուսալիության լրացուցիչ ֆինանսավորում ծրագիր

Վարկ թիվ 8388-AM

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համար

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվություն	7
Ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվություն	8
ԾՄՀ ընթացակարգերով դրամական միջոցների հոսքերի ստացման դիմումներ	9
Հատուկ հաշվի հաշվետվություն	10
Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	11

Grant Thornton

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9
Հ. + 374 10 50 09 64/61

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street,
Yerevan 0015, Republic of Armenia
T + 374 10 50 09 64/61

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի բաժնետիրոջը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (ՎԶՄԲ) 8388-AM վարկային համաձայնագրի շրջանակներում ֆինանսավորվող Էլեկտրամատակարարման հուսալիության լրացուցիչ ֆինանսավորում ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) կից ներկայացված Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համար Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունը, ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվությունը և հատուկ հաշվի հաշվետվությունը, ինչպես նաև ծախսերի մասին հաշվետվությունը (ԾՄՀ), որը ներկայացվել է Համաշխարհային Բանկ՝ 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար՝ 8388-AM վարկային համաձայնագրի շրջանակներում համալրումները հիմնավորելու նպատակով, ինչպես նաև Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները տալիս են Էլեկտրամատակարարման հուսալիության լրացուցիչ ֆինանսավորում ծրագրի՝ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և այդ ամսաթվին ավարտված տարվա ընթացքում ստացված ֆոնդերի և ճանաչված ծախսերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ծանոթագրություն 2-ում նկարագրված հաշվապահական հաշվառման քաղաքականության, Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի ուղեցույցների, 8388-AM վարկային համաձայնագրի համապատասխան հոդվածների:

Ի հավելումն, մեր կարծիքով ներկայացված ԾՄՀ-ները, ինչպես նաև դրանց պատրաստման համար ներդրված ներքին վերահսկողությունը և ընթացակարգերը կարող են վստահելի հիմք հանդիսանալ 8388-AM վարկային համաձայնագրի շրջանակներում համալրումների համար:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ից (այսուհետև՝ Ընկերություն)՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում

Մենք ուշադրություն ենք հրավիրում Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 2-ի վրա, որտեղ նկարագրվում է հաշվապահական հաշվառման հիմունքը: Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են օժանդակելու Ընկերության ղեկավարությանը՝ ՎԶՄԲ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման պահանջներին համապատասխանելու համար: Ուստի, Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները չեն կարող կիրառվել այլ նպատակով: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է սույն Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրություն 2-ում նկարագրված հաշվապահական հաշվառման քաղաքականության, ՎԶՄԲ ուղեցույցների, ինչպես նաև 8388-ԱՄ վարկային համաձայնագրի համապատասխան հոդվածների համաձայն պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ծրագրի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Grant Thornton

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Գնահատում ենք Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան

Տնօրեն

Էմիլ Վասիլյան

Առաջադրանքի պատասխանատու

10 հունիսի 2022թ.

«ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» 00040569

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

ԱՄՆ դոլար	Ծանոթ.	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ծրագրի կուտակային ծախսեր		23,040,770	21,304,021
Տրված կանխավճարներ	4	3,041,279	1,253,529
Մնացորդներ բանկերում		115	940
Ընդամենը ակտիվներ		26,082,164	22,558,490
Ֆոնդեր և պարտավորություններ			
Ծրագրի կուտակային ֆինանսավորում		25,122,018	21,295,988
Փոխարժեքային տարբերություն		(11,797)	19,598
Կրեդիտորական պարտքեր	5	971,943	1,242,904
Ընդամենը ֆոնդեր և պարտավորություններ		26,082,164	22,558,490

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2022թ. հունիսի 10-ին՝

Դավիթ Գրիգորյան

Գլխավոր տնօրենի տեղակալ/գլխավոր տնօրենի պարտականությունները կատարող

Գևորգ Մուրադյան

Գլխավոր տնօրենի տեղակալ/ գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 16-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվություն

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համար
ԱՄՆ դոլար

	Փաստացի		Պլանավորված		Տարբերություն		
	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Ծրագիր
Ֆոնդերի աղբյուրներ							
ՎԶՄԲ վարկ թիվ 8388-AM (տե՛ս ծանոթ. 6)	3,530,723	23,141,459					
Կառավարության համաֆինանսավորում	295,307	1,965,648					
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ ֆինանսավորում	-	14,911					
Ընդամենը	3,826,030	25,122,018					
Փոխարժեքային տարբերություն	(31,395)	(11,797)					
Նվազեցնել. Ֆինանսավորման օգտագործում							
Ծրագրի Մաս Ա.2 և Մաս Բ-ի շրջանակներում ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ներառյալ՝ դասընթացներ և աուդիտ և Ծրագրի գործառնական ծախսեր	1,736,749	22,940,770	3,868,341	25,072,362	(2,131,592)	(2,131,592)	41,169,271
Սկզբնավճար	-	100,000	-	100,000	-	-	100,000
Ընդամենը	1,736,749	23,040,770	3,868,341	25,172,362	(2,131,592)	(2,131,592)	41,269,271
Շրջանառու կապիտալի զուտ աճ (տե՛ս ծանոթ. 7)	2,057,886	2,069,451					

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 16-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվություն

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համար
ԱՄՆ դոլար

	Փաստացի		Պլանավորված		Տարբերություն		
	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Ծրագիր
Մաս 1: Էլեկտրահաղորդման ցանցի ամրապնդում	1,696,477	21,907,102	3,819,316	24,029,941	(2,122,839)	(2,122,839)	39,206,771
Մաս 2: Տեխնիկական օժանդակություն	40,272	1,033,668	49,025	1,042,421	(8,753)	(8,753)	1,962,500
Սկզբնավճար	-	100,000	-	100,000	-	-	100,000
Ընդամենը	1,736,749	23,040,770	3,868,341	25,172,362	(2,131,592)	(2,131,592)	41,269,271

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 16-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

ԾՄՀ ընթացակարգերով դրամական միջոցների ստացման դիմումներ

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
ԱՄՆ դոլար

Դիմումի համար	Ծրագրի Մաս Ա.2 և Մաս Բ-ի շրջանակներում ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ներառյալ՝ դասընթացներ և աուդիտ և Ծրագրի գործառնական ծախսեր
DA-46	2,335
DA-51	21,343
Ընդամենը	23,678

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 16-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Հատուկ հաշվի հաշվետվություն

Վարկ թիվ 8388-ԱՄ
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համար
ԱՄՆ դոլար

Սկզբնական մնացորդ 2021թ. հունվարի 1-ի դրությամբ		940
Ավելացնել.		
Կուտակային չբացահայտված անհամապատասխանություն	-	
Վարկի համալրում տարվա ընթացքում	467,350	
	467,350	467,350
Նվազեցնել. Հատուկ հաշվից փոխհատուցում Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկին տարվա ընթացքում		-
Հատուկ հաշվին կանխավճարով տրված գումարի ներկա մնացորդը (1)		468,290
Վերջնական մնացորդ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		115
Ավելացնել.		
Ժամանակաշրջանի ընթացքում վճարված ընդունելի ծախսերի գումար	468,175	
Ծառայության վճարներ (եթե առկա է)	-	
	468,175	468,175
Նվազեցնել. Ստացված տոկոսագումարներ (եթե կրեդիտագրվել են հատուկ հաշվին)		
Ընդամենը հաշվառված կանխավճար (2)		468,290
Բացահայտման ենթակա անհամապատասխանություն (1) – (2)		-

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 16-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ (այսուհետև՝ Ընկերություն) ստեղծվել է ՀՀ Կառավարության 1998թ. հուլիսի 20-ի թիվ 450 որոշման հիման վրա «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» դուստր ձեռնարկությունը «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» պետական փակ բաժնետիրական ընկերության վերակազմավորման և ՀՀ կառավարության 1999թ. նոյեմբերի 23-ի թիվ 709 որոշման հիման վրա «Էներգետիկ օբյեկտների մասնագիտացված պահպանություն» պետական փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու միջոցով, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» պետական փակ բաժնետիրական ընկերությանը միացման ճանապարհով: Ընկերությունը «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» դուստր ձեռնարկության, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» պետական փակ բաժնետիրական ընկերության և «Էներգետիկ օբյեկտների մասնագիտացված պահպանություն» պետական փակ բաժնետիրական ընկերության իրավահաջորդն է:

Ընկերությունն իրականացնում է էլեկտրամատակարարման հուսալիության լրացուցիչ ֆինանսավորում վարկային ծրագիրը (այսուհետև՝ Ծրագիր), որը ֆինանսավորվում է 2014թ. օգոստոսի 6-ին կնքված թիվ 8388-AM վարկային համաձայնագրով՝ ստորագրված Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (այսուհետև՝ ՎԶՄԲ) և Հայաստանի Հանրապետության միջև: Համաձայն ՀՀ Ֆինանսների նախարարության և Ընկերության միջև 2015թ. փետրվարի 2-ին ստորագրված Ենթավարկային համաձայնագրի՝ ՀՀ Ֆինանսների նախարարությունը ՎԶՄԲ-ի կողմից 36,000,000 ԱՄՆ դոլար գումարի չափով տրամադրված վարկի գումարը փոխանցել (վերավարկավորել) է Ընկերությանը, որն էլ այդ միջոցները պետք է օգտագործի բացառապես Ծրագիրն իրականացնելու նպատակով:

Ծրագրի նպատակն է հաղորդիչ ցանցի հուսալիության բարձրացումն ու թողունակության մեծացումը:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից.

Մաս Ա. Էլեկտրահաղորդման ցանցի ամրապնդում

Ա.1. Աշխատանքների, ապրանքների և տեխնիկական աջակցության ապահովում Հրազդանի ջերմային էլեկտրակայանից մինչ Շինուհայրի ենթակայան գործող էլեկտրահաղորդման գծի փոխարինման, այդ թվում հողի ձեռքբերման ու վերաբնակեցման համար փոխհատուցման բողոքների ներկայացման մեխանիզմների ստեղծման նպատակով:

Ա.2. Աշխատանքների, ապրանքների և տեխնիկական աջակցության ապահովում (i) Հաղթանակ ենթակայանի հիմնանորոգման ու ընդարձակման և (ii) Չարենցավան-3, Վանաձոր-1 և Զովունի ենթակայանների հիմնանորոգման համար:

Մաս Բ. Տեխնիկական օժանդակություն

Ապրանքների և տեխնիկական աջակցության, Ուսուցանման և Գործառնական ծախսերի ապահովում Ընկերության համար, ուղղված իր կարողությունների ամրապնդմանը՝ Էլեկտրահաղորդման ակտիվների շահագործման և պահպանության, տեխնիկական վերահսկողության, պլանավորման, գնումների, ֆինանսական կառավարման, Ծրագրի կառավարման ոլորտներում:

Ծրագրի ֆինանսավորումը բաղկացած է հետևյալ մասերից.

Հոդված	Վարկի հատկացված գումարը (արտահայտված ԱՄՆ դոլարով)	Ֆինանսավորման ենթակա ծախսերի տոկոսը (առանց հարկերի)
Ծրագրի Մաս Ա.2 և Մաս Բ-ի շրջանակներում ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ներառյալ՝ դասընթացներ և աուդիտ, և Ծրագրի գործառնական ծախսեր	35,900,000	100%
Սկզբնավճար	100,000	
Ընդամենը	36,000,000	

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Զ. Անդրանիկի 1:

2 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

2.1 Պատրաստման հիմքերը

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվապահական հաշվառման հաշվեգրման սկզբունքով, ինչպես նաև ՎԶՄԲ ուղեցույցի հոդվածների և թիվ 8388-AM վարկային համաձայնագրի համապատասխան պահանջների համաձայն: Կարևոր հաշվապահական հաշվառման քաղաքականությունները բացահայտված են ստորև:

2.2 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ): Սույն Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ԱՄՆ դոլարով (ներկայացման արժույթ):

Ծրագրի ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս հաշվեգրված ծախսերի հետ կապված գործարքները, կառավարության համաֆինանսավորումը և համաֆինանսավորման միջոցներից վճարումները՝ ԱՄՆ դոլարից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի նախորդ օրվա դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հայտարարված հաշվարկային փոխարժեքով: ՎԶՄԲ-ի միջոցներից Ծրագրի գործընկերներին կատարված ԱՄՆ դոլարից տարբեր այլ արժույթով արտահայտված ուղղակի վճարումները գրանցվում են client connection (https://clientconnection.worldbank.org) համակարգի փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ դրամական միջոցները, կանխավճարները և կրեդիտորական պարտքերը վերահաշվարկվում են՝ կիրառելով այդ ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված փոխարժեքը. 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում է 480.14 ՀՀ դրամ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում՝ 522.59 ՀՀ դրամ): Փոխարժեքային տարբերությունը ճանաչվում է ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին

հաշվետվությունում և փոխարժեքային տարբերության կուտակված գումարը բացահայտվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ «Փոխարժեքային տարբերություն» հոդվածում:

2.3 Ծրագրի ֆինանսավորում

Թիվ 8388-ԱՄ վարկային համաձայնագրի շրջանակներում հատկացված ֆինանսավորումը հաշվառվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես «Ծրագրի կուտակային ֆինանսավորում» և ճանաչվում է յուրաքանչյուր համալրման ժամանակ: Ի լրումն՝ տարվա ընթացքում ստացված ֆոնդերը բացահայտվում են Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունում:

2.4 Ծրագրի ծախսեր

Ծրագրային ծախսերը ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով: Ծրագրի կուտակային ծախսերը բացահայտվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ ակտիվներում: Ի հավելումն՝ ընթացիկ տարվա ծախսերը ներառվում են Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին և ըստ Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման օգտագործման մասին հաշվետվություններում:

2.5 ՎԶՄԲ ֆինանսավորում

Վարկային համաձայնագրի համար ընդունելի ծախսերի ֆինանսավորման նպատակով Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկը վճարումներ է կատարում՝ օգտագործելով հետևյալ վճարման մեթոդներից մեկը կամ մի քանիսը.

ա) Հատուցում

Բանկը կարող է հատուցել փոխառուին՝ նրա սեփական միջոցներով կատարված ընդունելի ծախսերը ֆինանսավորելու նպատակով:

բ) Կանխավճար

Բանկը կարող է առհաշիվ վարկային վճարում կատարել փոխառուի հատուկ հաշվին՝ ընդունելի ծախսերը ֆինանսավորելու նպատակով և դրանց կատարմանը զուգընթաց, որոնց համար հիմնավորող փաստաթղթերը պետք է ներկայացվեն ավելի ուշ:

գ) Ուղղակի վճարումներ

Բանկը փոխառուի հայցով կարող է վճարումներ կատարել ուղղակիորեն երրորդ անձանց՝ ընդունելի ծախսերի դիմաց:

դ) Հատուկ պարտավորագրեր

Բանկը կարող է վճարումներ կատարել երրորդ անձին հատուկ պարտավորագրի շրջանակներում ընդունելի ծախսերի փոխհատուցման համար փոխառուի գրավոր հաստատված հայցով, որը համաձայնեցված է փոխառուի և Բանկի կողմից:

2.6 Կանխավճարներ

Կանխավճարները, որոնք բաղկացած են շինարարական աշխատանքների, ծառայությունների և ապրանքների դիմաց վճարված գումարներից, չափվում են անվանական արժեքով:

2.7 Կրեդիտորական պարտքեր

Կրեդիտորական պարտքերը ներառում են վճարվելիք գումարները, որոնք չափվում են անվանական արժեքով:

3 Ծրագրի փակման ամսաթիվ

Համաձայն վարկային համաձայնագրի՝ Ծրագրի վերջնաժամկետ է սահմանվել 2023թ. դեկտեմբերի 31-ը:

4 Տրված կանխավճարներ

ԱՄՆ դոլար	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
«Էֆասեկ Էնջենարիա է Սիստեմաս» Էս Էյ	898,381	930,737
«Չայնա Նեյշնլ Էլեկտրիկ Էնջինիրինգ» ՍՊԸ	1,986,523	-
«Քսիան Էլեկտրիկ Էնջինիրինգ» ՍՊԸ	65,617	239,406
Հայաստանի Հանրապետության պետական բյուջե	90,758	83,386
	3,041,279	1,253,529

Հաշվետու ամսաթվի դրությամբ պետական բյուջեի մնացորդները բաղկացած են ոչ ռեզիդենտ եկամտային հարկի կանխավճարներից, որոնք վճարվել են «Քսիան Էլեկտրիկ Էնջինիրինգ» ՍՊԸ-ի համար:

Ընկերության ղեկավարությունը հավատացած է, որ պետական բյուջե կատարված բոլոր կանխավճարներն ամբողջովին ենթակա են վերականգնման:

5 Կրեդիտորական պարտքեր

	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
«Քսիան Էլեկտրիկ Էնջինիրինգ» ՍՊԸ	573,108	545,630
«Կոնսուլեկտրա և Դեկոն» Կոնսորցիում	-	7,960
«Էֆասեկ Էնջենարիա է Սիստեմաս» Էս Էյ	394,062	687,324
Այլ	4,773	1,990
	971,943	1,242,904

6 Վարկ թիվ 8388-AM

ԱՄՆ դոլար

	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ուղղակի վճարումներ	3,063,373	14,722,109
ԾՄՀ ընթացակարգեր	23,678	36,349
Հատուկ հաշվի կանխավճար	467,350	8,319,350
Կանխավճարի մարում	(487,086)	(8,319,234)
Այլ ընթացակարգեր	463,408	8,282,885
Սկզբնավճար	-	100,000
	3,530,723	23,141,459

7 Շրջանառու կապիտալի զուտ աճ

ԱՄՆ դոլար

	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Բանկային մնացորդների աճ/(նվազում)	(825)	115
Տրված կանխավճարների աճ/(նվազում)	1,787,750	3,041,279
Կրեդիտորական պարտքերի աճ/(նվազում)	270,961	(971,943)
	2,057,886	2,069,451

8 «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ կողմից ստացված գումարների և Համաշխարհային Բանկի փոխհատուցումների համադրում

Վարկ թիվ 8388-AM

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

ԱՄՆ դոլար

Հոդված	Դիմում	Ընկերություն	ՀԲ	Տարբերություն
Ծրագրի Մաս Ա.2 և Մաս Բ-ի շրջանակներում ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, ներառյալ՝ դասընթացներ և աուդիտ, և Ծրագրի գործառնական ծախսեր				
	DA-40	18,912	18,912	-
	DA-42	1,076,850	1,076,850	-
	DA-43	7,755	7,755	-
	DA-46	439,076	439,076	-
	DA-48	1,986,523	1,986,523	-
	DA-51	21,343	21,343	-
		3,550,459	3,550,459	-
Հատուկ հաշվի կանխավճար/(մարում)				
	DA-40	(18,912)	(18,912)	-
	DA-41	7,500	7,500	-
	DA-43	(7,755)	(7,755)	-
	DA-44	426,800	426,800	-
	DA-45	12,000	12,000	-
	DA-46	(439,076)	(439,076)	
	DA-47	15,000	15,000	
	DA-49	4,200	4,200	-
	DA-50	1,850	1,850	-
	DA-51	(21,343)	(21,343)	-
		(19,736)	(19,736)	-
Ընդամենը		3,530,723	3,530,723	-